ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ

ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

0095, ՀՀ, Երևան, Մ.Բաղրամյան պող. 19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ԱՐԱՐԱՏ ՄԻՐԶՈՅԱՆԻՆ

Մեծարգո պարոն նախագահ

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 109-րդ, «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 65-րդ և 67-րդ հոդվածներով, օրենսդրական նախաձեռնության կարգով Ձեզ է ներկայացվում «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծը:

Գրությանը կից ներկայացվում է՝

ա) նախագիծը (հիմնական զեկուցող՝ Արման Աբովյան)

բ) նախագծի ընդունման հիմնավորումը,

գ) գործող Օրենքում լրացում կատարելու մասին տեղեկանքը:

Խնդրում եմ սահմանված կարգով նախագիծը դնել շրջանառության մեջ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ԱՐՄԱՆ ԱԲՈՎՅԱՆ

*<u>ՆԱԽԱԳԻԾ</u>*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ
# «ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՐԵԴԻՏԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Հոդված 1.* Հայաստանի Հանրապետության 2008 թվականի հունիսի 17-ին ընդունված «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքը (այսուհետ նաև՝ Օրենք) լրացնել նոր 15.1 հոդվածով.

«Հոդված 15.1. Տարեկան փաստացի տոկոսադրույքի առավելագույն չափը

1. Բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի կողմից տրամադրված կրեդիտների համար տարեկան փաստացի տոկոսադրույքի չափը չի կարող գերազանցել կրեդիտավորման պայմանագրի կնքման օրվա դրությամբ Կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկը:

2. Կրեդիտավորման պայմանագրով սույն հոդվածի 1-ին մասով սահմանված առավելագույն շեմը գերազանցող տարեկան փաստացի տոկոսադրույք նախատեսվելու դեպքում տարեկան փաստացի տոկոսադրույքի չափը համարվում է սույն հոդվածի 1-ին մասով սահմանված համապատասխան առավելագույն չափը:»

*Հոդված 2.* Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

# ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին նախագծի վերաբերյալ

Գործող օրենսդրությամբ տրամադրված վարկի դիմաց վճարման ենթակա տոկոսագումարը սահմանափակված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած՝ բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկի չափով: Ավելին, նշված գումարը գերազանցելը, համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի, կարող է դիտվել որպես հանցագործություն՝ վաշխառություն: Օրենսդրի նման մոտեցումն ուղղված է սպառողների՝ վարկառուների, շահերի պաշտպանությանը, որպեսզի վերջիններս ծանր պայմաններից դրդված ստիպված չլինեն ստանձնել անհամաչափ տոկոսներ վճարելու պարտականություն, քանի որ դա վերջիններիս կարող է գցել ծանր ֆինանսական դրության մեջ: Միաժամանակ փորձ է կատարվել կանխել բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից գերշահույթ ստանալու հնարավորությունը:

Սակայն փաստացի բանկերը և վարկային կազմակերպությունները հնարավորություն ունեն սահմանել տարբեր տեսակի և չափի սպասարկման և այլ վճարներ, որոնք վճարելուց հետո կարող է ստեղծվել այնպիսի իրավիճակ, որ տարեկան փաստացի տոկոսադրույքը գերազանցի ՀՀ Կենտրոնական բանկի սահմանած՝ բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկը: Գործող կարգավորումների պայմաններում, երբ տարեկան փաստացի տոկոսադրույքը որևէ կերպ սահմանափակված չէ բոլոր բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից տրամադրվող գրեթե բոլոր վարկատեսակներով ՀՀ Կենտրոնական բանկի սահմանած՝ բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկը գերազանցվում է և վարկառուները ստիպված են անհամաչափ մեծ գումար վճարել ստացված վարկի դիմաց, ինչն էլ իր հերթին բացասաբար է ազդում մարդկանց կենսամակարդակի վրա՝ բանկերի և վարկային կազմակերպությունների համար ապահովելով գերշահույթ:

Հաշվի առնելով երկրում առկա տնտեսական ծանր պայմանները, նաև համավարակով պայմանավորված գործազրկությունը, արդեն իսկ տրամադրված վարկերի ծավալը և դրանց կարիքը ունեցող քաղաքացիների թիվը, ակնհայտ է դառնում, որ պետության կողմից պետք է հրատապ քայլեր ձեռնարկվեն՝ ոլորտում առկա խնդիրների կարգավորման ուղղությամբ: Ուստի այս օրենսդրական նախաձեռնությունն էլ ուղղված է այդ խնդիրներից մեկի կարգավորմանը:

Տեղեկանք

փոփոխվող հոդվածի վերաբերյալ

*«Հոդված 15.1. Տարեկան փաստացի տոկոսադրույքի առավելագույն չափը*

*1. Բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի կողմից տրամադրված կրեդիտների համար տարեկան փաստացի տոկոսադրույքի չափը չի կարող գերազանցել կրեդիտավորման պայմանագրի կնքման օրվա դրությամբ Կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկը:*

*2. Կրեդիտավորման պայմանագրով սույն հոդվածի 1-ին մասով սահմանված առավելագույն շեմը գերազանցող տարեկան փաստացի տոկոսադրույք նախատեսվելու դեպքում տարեկան փաստացի տոկոսադրույքի չափը համարվում է սույն հոդվածի 1-ին մասով սահմանված համապատասխան առավելագույն չափը:»*